

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшахъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաջօրեայ):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցիւզով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Հացի առևտուրը և սովը.— Երբեք ՏԵՍՈՒ-
թիւնը երևանում հիմնական գինեգործական զբա-
ղուցի մասին: Մի պահասութիւն. Երբեք լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.— ԲՕՐՍԱ.— ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մօսկվայի
հայ հասարակութիւնը:

ՀԱՅԻ ԱՌԵՏՈՒՐ ԵՒ ՍՈՎԸ

Ինչպէս յայտնի է Ռուսաստանի ներքին
նահանգներին մի քանիսնեւում այս րօպէկս
սով է տիրում: Հացահատիկների հունձը
այս տարի անաջող է եղել, իսկ հացահատի-
կների արտահանութիւնը դէպի օտար
երկրները այնու ամենայնիւ չէր դադարե-
լով երկրի գիւղական ազգաբնակչութիւնը
շատ տեղերում գուրկ է մնացել ոչ թէ
միայն սերմացու աշնանացան հացահատիկ-
ներից, բայց և ուտելու հացից:

Պետութեան ամեն կողմերում սկսված
են հանգանակութիւններ յօգուտ սովեակնե-
րի պետական գանձարանը 60 միլիոն ռուբ-
լի է նշանակել սովեակ ժողովրդի կարիքը
բաւարարելու համար, նոյն իսկ օտար
երկրներին մի քանիսնեւում սկսված են
գրամական հանգանակութիւններ, թշուառ
միջակի մէջ գտնվող ռուս գիւղական ազ-
գաբնակչութեանը օգնութեան ձեռք կարկա-
ռելու նպատակով:

Սակայն որքան և համակրելի լինէին
այդ տեսակ ժամանակաւոր միջոցներ յայտնե-
լից աղէտի յարատեւութեան առաջին առ-
նելու համար, բայց, ի հարկէ, նրանք չեն
կարող արմատական կերպով ազատել երկի-
րը աղէտի կրկնվելուց ապագայում: Իրա-
համար անհրաժեշտ է հիմնաւոր և տեւե-
ղական միջոցներ ձեռք առնել հարկա-
ւոր է հացահատիկների արտահանութեան
չափը որոշ աստիճանով սահմանափակել
օրէնսդրական ճանապարհով:

Այդ պատճառով չենք կարող ուշադրու-
թիւն չը դարձնել Պետերբուրգի տնտեսա-
գէտների ժողովում պ. Մուսնիցիու նորեւ-
րումն արած գիւղացւան վրա Ռուսաստա-
նում եղած սովի պատճառների և դրան
առաջն առնելու միջոցների մասին: Զեկու-
ցանողը բացի բնական պատճառներից,
սովի պիտուր պատճառ համարում է հա-
ցի արտահանութիւնը: Ահա մի քանի հե-
տադրքեր թւանշաններ, որ բերում է իր
գիւղացւան մէջ պ. Մուսնիցիու. մինչև 40-
ական թւականները հացը 25 միլիոն պու-
դից աւելի չէր արտահանվում Ռուսաստա-
նից, ճորտերի ազատութիւնից յետոյ հէնց
առաջին տասնամեակում հացի արտահա-
նութիւնը քառապատկից, իսկ 1887 թվին
այդ արտահանութիւնը հասաւ արդէն 327
միլիոն պուդի: Պարզ է որ հացի այդ ա-
հագին քանակութեան մէջ, որն արտա-
հանվում է, գտնվում է ոչ թէ միայն Ռու-
սաստանում, արդեւաբար հացի աւե-
րորդը, բայց և միացորդը, որը անհրաժեշտ
է թէ ժողովրդի սնունդի համար և թէ
դաշտերը սերմանելու համար: Զեկուցանողն
առաջարկում է կառավարութեան արգելել
հացահատիկների արտահանութիւնը Ռու-
սաստանից, եթէ ոչ ամբողջապէս, գոնե
յայտնի չափով սահմանափակել այդ ար-
տահանութիւնը: Նա առաջարկում է այդ
արգելքը դնել ոչ թէ միայն անաջող հուն-
ձի տարիներին, բայց և ընդհանրապէս:

Եթէ ձիւղ է պ. Մուսնիցիու հայեացքը,
այն ժամանակ պէտք է այն համոզմունքին
հասնել, որ նոյն իսկ հագին եւրօպա-
կան Ռուսաստանը, որը համարվում էր
միշտ հացատու երկիր, չէ դիմանում հա-
ցահատիկների անչափ արտահանութեան:

Այդ ցաւալի իրողութիւններն աչքի առ-
ջն ունենալով և Մուսնիցիու հայեացքների
հետ ծանոթանալով մենք ակամայ յիշե-
ցինք մի քանի տարի սրանից առաջ մեր
մի հայ տնտեսագէտի, պ. Աւետիք Արա-
խանեանցի Անդրկովկասից հացահատիկնե-

րի արտահանութեան մասին գրած յօ-
դուածները և նոյն հարցի մասին նրա ա-
րած «Փառաւոր» գեկուցումը կովկասեան
Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Պա-
րոնը, ինչպէս մենք իր ժամանակին ցոյց
տուեցինք «Մշակի» մէջ, հաւատացնում
էր որ հացահատիկների արտահանու-
թիւնը կարող է մեր երկրի համար հա-
րստութեան մի նոր աղբիւր դառնալ,
մոռանալով որ այն տարին, երբ նա իր
գիւղացիներին էր անում, մեր երկ-
րում զիջված կար երեք տարվայ հացի
պաշար, որը, որպէս աւելորդ բերք ար-
տահանվելով պատահամբ շահ տուեց մի
քանի հացադաժնողներին: Սակայն ընդ-
հանրապէս մեր երկրի մէջ արդեւաբար
հացը տարուց տարի ոչ թէ միայն չէ կա-
րող արտահանվել, բայց և հագիւ բաւակա-
նութիւն է տալիս երկրի ազգաբնակչութեան
ամենամանհրաժեշտ պէտքերին և շատ ան-
գամ նոյն իսկ Ռուսաստանի ներքին նահանգ-
ներից է բերվում հացը դէպի մեր երկիրը:

Եթէ ռուս տնտեսագէտները այժմ հա-
մադիւլ են, որ Ռուսաստանի պէս բուն
հացատու, ընդարձակ դաշտավայրեր ունե-
ցող ահագին երկրներ սատիկ փնտրում է
հացի արտահանութիւնից և երկրի ար-
դեւաբար հացը չէ բաւականացնում ժո-
ղովրդի ամենամանհրաժեշտ կարիքներին,
— ուր մնաց, որ մեր սարոտ Անդրկովկասը
կարողանայ հացատու երկրի համարվել
մի երկիր, որը ընդունակ լինէր արտահա-
նել հացահատիկներ:

Ուրեմն որքան վտանգաւոր է մեր երե-
ւելի տնտեսագէտի պէս, անպատճառ մի
նոր միտք յայտնելու նպատակով, իր խել-
քին դու տալ՝ գուրկ լինելով զիտողու-
թեան ընդունակութիւնից, ձիւղ հետազո-
տութեան ընդունակութիւնից, մի և նոյն
ժամանակ գուրկ լինելով և հաւաքած փաս-
տերից ու թւանշաններից ձիւղ եզրակացու-
թիւններ դուրս բերելու ընդունակութիւնից...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԵԼԻ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՊ-
ՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Երևանեան նահանգում հաստատելի ուսում-
նարանը պիտի ունենայ երկու նպատակ՝ 1) պիտի
իր սաներին սովորեցնի գինեգործութեան կատա-
րելագործված ձևեր և 2) վաղի կանոնաւոր մշակ-
ման հետ պիտի ծանօթացնի և խաղողի տեսակ-
ներից ընտրութիւն անեն:

Գոյնանման ուսումնարանների համար 1883 թ.
Բարձրագոյն տրված կանոնադրութեան հիման վրա
այդ ուսումնարանը ստորին կարգի գիւղատնտե-
սական դպրոց պէտք է լինի, 3 դասարանով: Ինչ
որ վերաբերում է աշակերտների գործնական և
տեսական պարագմունքներին և ծաւալին, ես
այդ թողնում եմ, որ Գիւղատնտեսական ընկե-
րութիւնը որոշի:

Որովհետև ուսումնարանի նպատակը պիտի լի-
նի աւելի գործնական պարագմունքները, որտեղ
փոքր ի շատեւ մտաւոր դարգացման հետ ի միա-
սին անհրաժեշտ է և ֆիզիկական ոյժ, ես կար-
ծում եմ, որ պէտք է ընդունել աշակերտներ ոչ
պակաս քան 15 տարեկան:

Իրա հետ միասին ցանկալի կը լինէր, որ այդ
մասնագիտական գործնական ուսումնարանը մշա-
նէին գիւղական կամ քաղաքային ուսումնարան-
ներից աւարտած և կամ միջնակարգ դպրոցների
առաջին դասարանների դասընթաց անցած աշա-
կերտներ: Այդ դիպագծում այլ ևս հարկ չի լի-
նի, բացի վերոյիշեալ երեք մասնագիտական դա-
սարաններից, ունենալ և մի պատաստական, որը
թէ առանձին ծախսեր կը պատճառի և թէ վար-
չութեանը աւելորդ զբաղմունք կը պատճառի:

Ի նկատի ունենալով Երևանի նահանգի ժողո-
վրդական կրթութեան աստիճանը, ես հաւատա-
ցած եմ, որ միշտ կունենանք բաւականաչափ
գիւղական և քաղաքային ուսումնարաններն ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Խօսելով Մօսկվայի հայ հասարակութեան մա-
սին ամենից առաջ պէտք է աչքի առաջ ունե-
նալ որ նա իր մայր-հայրենիքից դուրս է ապ-
րում, կազմում է գաղթականութիւն, կ'օր-
նիւ: Մայրիկի դանաղան պատճառներով են
թողնում իրանց հայրենիքը և զանազան ձևով են
բնակութիւն հաստատում օտար երկրում, այն-
պէս որ ամեն մի կ'օրնիւ ունի իր առանձին
բնակութիւնը, տարբերվում է ուրիշ կ'օրնիւ-
ներից իր առանձին յատկութիւններով: Բայց չը
նայելով այդ տարբերութիւններին՝ համարեա բո-
լոր կ'օրնիւները (չը հաշուելով այն կ'օրնիւնե-
րը, որոնք կազմվում են մասսային գաղթա-
կանութիւնից) ունեն մի ընդհանուր յատկութիւն.
— նրանք՝ ինչպէս ժողովուրդն ասում է՝ «ոչ
հայի խումկ են, ոչ թուրքի ուղարկուկ»: Այդ
յատկութիւնից առաջ է գալիս մի մեծ բարոյա-
կան պակասութիւն.— բարոյական պարտականու-
թիւնների գիտակցութեան բացակայութիւն: Իր
բարեկամներին, իր հայրենակիցներին, իր ցե-
ղակիցներին հեռացած գաղթականը ամենալա-
գէտում դառնում է «անխել-անշուռ» մարդ,
որ իր ընտանիքից դուրս ոչինչ չէ ծանա-
ղում, ոչինչ չէ սիրում, իսկ վատ դէպքում դառ-
նում է մի հրէշ, որին Երեւանի շատ սրամիտ
կերպով անուանում է ЖЕЛУДОЧНО-ПОЛОВОЙ КО-
МПОЗИТЪ. Ես այստեղ հաշիւ չեմ առնում բացա-
ռական անձնաւորութիւններին և այն համեմա-

տաբար բացառական դէպքը, երբ մի որ և է
հասարակական բարձր դպրաբար լուսաւորում է
գաղթականների հոգեկան խաւարը.— խօսքս առ
այժմ այն պայմաններին մասին է, որոնց ազդե-
ցութեան տակ սովորաբար կազմակերպվում է
գաղթականների բնակութիւնը և որոնք ի դէպ
ասել թոյլ չեն տալիս, որ լուսաւոր դպրաբար-
ները շուտով և ամբողջապէս գրաւեն գաղթա-
կանների սրտերը:

Վերջից օրինակ մի որ և է դարաբաղցու իր
հայրենիքում և այստեղ: Այնտեղ, Վարաբաղում,
իր հայրենի գիւղում նա ունի արեւակից ազգա-
կաններ, որոնց վերաբերմամբ նա բոլորովին ան-
տարբեր լինել չէ կարող. նրա խիղճը չի տանի,
նրա աչքը չի տանի, որ նրանք աղքատութիւ-
նից սոված, զգալի զուգն— դուռն կեննեն, չէ,
նրա թաւի բն այդ չի վերցնի. վերջապէս ինչ
կասի լսալիս: Այնտեղ հայրենիքում եթէ լուի
բարոյական բնազդում, գոնե հասարակական կար-
ծիքը կը ստիպի նրան կատարել իր բարոյական
պարտականութիւնը: Այն տեղ դժուար կարող է
լուի բնազդում, որովհետև նա իր աչքով չէ
տեսնում աղքատութիւնը, որովհետև այդ աղքա-
տութիւն կրողը նրա արեւն ահիցն է, խնա-
րական կարծիքը նա արհամարհել չէ կարող,
այդ իր գիւղակիցներին, իր նմանն երկ կարծիքն
է. իսկ այստեղ, Մօսկվայում: Այստեղ նա ի-
րան կապված չէ զգում բարոյական պարտակա-
նութիւններով: Անդալազացած և բարոյական կող-
մից միջակ մարդու համար երկու պայման ան-
հրաժեշտ են, որ նա կարողանայ կարեկցել ուրի-
շի ցաւին, մտնել ուրիշի դրողութեան մէջ: Նա
պէտք է իր աչքով տեսնի այդ տանջանքը և
տանջվողը պէտք է նրան մօտիկ լինի, պէտք է

բոլոր յարաբերութիւնները կազմակերպվում են
հանգամանքների բերմամբ, անգիտակցաբար,—
այն ժամանակ այդ գաղթականի ալ տրուի ս-
տակաւն զբաղմունքները սնունդ չը գտնելով,
սկզբում, եթէ կարելի է այսպէս ասել, ժանգո-
տում են անգործ մնացած երկաթի դործիքի
նման, յետոյ հեռագնալ բթանում, ոչնչանում են:

Աւելացրէք այժմ դրա վրա և այն բոլոր ան-
դարգացած մարդկանց, մասամբ և բոլոր մարդ-
կանց ընդհանուր յատկութիւնը, որի մասին ես
վերելում ակնարկեցի: Աղբիւրի կեանքի դարգացման
այն աստիճանում, երբ նրանք դեռ ցեղնորդ են
ապրում (родовой бытъ), այն ինչ որ յանցանք է
համարվում ցեղակցի վերաբերմամբ, թողարկում
է, մինչև անգամ քաջալերում է ուրիշ ցեղի ան-
դամների վերաբերմամբ: Շատ մարդկանց վայրե-
նիքին հնարաւոր են համարում ուտել միայն օ-
տար վայրենիքների միւսը: Բայց ինչու շատ հեռու
գնանք. ինչպէս էին վարվում և վարվում են մինչև
այժմ (յիշեցէք Ստենլին և իր ճանապարհորդ-
ականիցներին) սպիտակամորթ թշնեւերը
և ամէրիկական վայրենիքների վերաբերմամբ:
Վերջապէս յիշեցէք, որ մի քառորդ դար առաջ
Ռուսաստանում ճորտատէրերը, մինչև անգամ կըրթե-
լի իր վրէժները (միայն կրթվածներն են կարողա-
նում թէօրեական կերպով հիմնել և արդարացի
անբարոյական յարաբերութիւնները) բոլոր ռուս-
ներին երկու ց և զի էին բաժանում— աղնիւն ե-
րի (благородные) և ստորին երի (пошлые):

Գուցէ այժմ էլ, ընթերցողներ, այնպիսի ա-
րիւտակրատ կամ ուսումնական ծանօթներ
ունէք, որոնք բոլոր Գիւղացու ռուսի ստոր
շինսի մարդ են համարում:
Այժմ մտածեցէք, թէ ինչ ուղղութիւն պէտք է

աւարտած աշակերտներ, որոնք ցանկութիւն կը յայտնեն վերոյիշեալ գինեգործական ուսումնարանը մտնելու: Տարրական ուսումնարաններէ տեսչի տուած տեղեկութիւններէ համաձայն 1889 թ. Երևանի նահանգում կային 8 արժեւորական գիւղական և քաղաքային ստորին կարգի ուսումնարաններ: Նրանց մէջ սովորում են 600 տղայ երեխաներ, 8 հատ համայնական-գիւղական քաղաքային ուսումնարաններ՝ 278 աշակերտներով և վերջապէս 9 հողային վարչութեան ուսումնարաններ՝ 462 աշակերտներով: Այդ 25 ուսումնարաններով 1889 թ. կային 1400 աշակերտներ: 25 ուսումնարաններէջ 2-ը եռամեայ են և ունեն 318 աշակերտ. 11-ը երկամեայ՝ 550 աշակերտ. և 12-ը միամեայ՝ 552 աշակերտներով:

Տարրական այդ 25 ուսումնարաններէջ աւարտող կարելի է ընդունել՝ եռադասեաններէջ ոչ պակաս քան 100 աշակերտ, նոյնքան էլ երկդասեաններէջ և մօտ 250 էլ միդասեաններէջ, ընդամենը մօտ 450 աշակերտ: Եթէ ի նկատի ունենանք և այն, որ գինեգործական ուսումնարանը կարող են մտնել եռադասեան ուսումնարաններէ 2 դասարանի կուրս անցածները և նոյն իսկ եռադասեան և երկդասեան առաջին դասարանի կուրս անցածները, այն ժամանակ գինեգործական դպրոց մտնել կարողացողներէ թիւը կարելի է ընդգծենք կրկնակի: Բացի այդ կարելի է հաշուել և զանազան պատճառներով Երևանի գինեգործային և սեմինարիայից արձակվածներին: Իսկ որովհետեւ ամեն տարի գինեգործական ուսումնարանի առաջին դասարան մտնողների թիւը 25-ից աւել չը պիտի լինի, աշակերտների ընդհանուր թիւը ընդունելով 60, այն ժամանակ կարելի է վստահ լինել, որ 400—800 աշակերտներից միշտ կը գտնվեն 25-ը, որոնք կը կամենան իրանց ուսումը շարունակել գինեգործական ուսումնարանում:

Այդ հանգամանքների պատճառով գինեգործական ուսումնարանին կից պատրաստական դասարան ունենալը կը լինէր և աւելորդ և մասնագիտական դրամուծներին չիտասկար:

Գինեգործական ուսումնարանի ծախսերը եւ իրաւացի են համարում յատկացնել Երևանի նահանգի հողային վարչութեանը արքունական գանձարանի օգնութեամբ: Նոյնպէս դիտարկուելու են և ինքնուրույն Արքունական Կայսրաւորութեան միջնորդութեամբ, որ Երևան քաղաքի մօտ գտնված «Սարգսարեան» կոչված այգին զիջանքն յօգուտ նախագծվող գինեգործական ուսումնարանին: Այդ այգին առաջ ծածկուած էր իւրեւ լոկ զբօսավայր, երեք տարի է, որ գիւղատնտես Տարաթինիկի հրակողութեամբ բամբակացանութեան փորձեր են

կատարվում, բայց որովհետեւ այդ այգին շատ հանգամանքների պատճառով բամբակի մշակման համար անյարմար է, դրա համար այդ նպատակով օրինակելի պլանտացիա պիտի պահել բամբակի արդիւնաբերութեան կենտրոնը, այն է Շարտրո-Վարալազեանցի դասուը և այդ պլանտացիան չինել բաց դաշտի վրա և ոչ թէ պարսպապատ այգու մէջ, որպէս զի բամբակի մշակմամբ հետաքրքրվող ամեն մի մարդ կարողանայ ծանօթանալ կանոնաւոր մշակման ձևերի հետ:

Իմ կարծիքով «Սարգսարեան» այգին դրանից աւելի յարմարաւոր գործադրութիւն չէ կարող գտնել: Գուցէ իմ այս տեղեկագրի մէջ չը կարողացայ պարզել այն բոլոր սկզբնական տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ էին Երևանում բացվելի գինեգործական ուսումնարանի ելից, մտից, նախագծերի յատկագծերի որոշման համար, այդ դիպուածում ես միշտ պատրաստ եմ ընկերութեանը հէնց առաջին հարցին բաւարարութիւն տալ մատակարարելով լրացուցիչ տեղեկութիւններ:

Այդ առթիւ կաշխատենք «Մշակ» լրագրի յաջորդ համարներից մէկում յայտնել մեր կարծիքը թէ որքան նպաստաւոր կը լինէր Երևանում հիմնել մի ուսումնարան, թէ մի այլ միջոց:

Վ. Ագուլիս. Մ. Մուսինեան

ՄԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

«Մշակը» շատ անգամ է չօշափել «ուսուցչական խնայողական արկղի» հարցը. քանի քանի անգամ նա մասնագիտաց է արել, բացատրել է փոխառու—խնայողական գանձարանի օգուտները, այդ արձագանք գտաւ մեր միւս պարբերական հրատարակութիւնների մէջ, մինչև անգամ մինչև հարց բարձրացրեց, թէ 1882 թ-ի ուսուցչական ժողովից մի դուստր է մնացել, որը կարելի է յատկացնել ուսուցչական-խնայողական արկղին որպէս հիմնական դրամագլուխ: Մասնուր կատարեց իր պարտքը. նա հարցը բարձրացրեց, մնում էր, որ մենք ձայնակցէինք նրան և գործի սկզբնաւորութեան ձեռք զարկէինք:

Ինչպէս չարեցինք, ինչպէս մինչև այժմ ուսուցչական ներս չունենք մեր փոխառու-խնայողական արկղի: Պատճառն այն է, որ մեզանից իւրաքանչիւրը ապրում է իր համար. մեզ համար այնքան էլ ցաւ. չէ, եթէ մեր ընկերը վաղը անախկալ դիպուածով քաղցած կը մնայ: Մեր մէջ կարծես ամբողջանող, միանող հօգի չը կայ, կարծես մեր մէջ տիրում է կենտրոնախոյս յատկութիւն: Ուսուցչից, որ հասարակութեան զանազան

տարրերը կապում է իրար, որ նրանց առաջնորդում է դէպի հաւաքական գործունէութիւն (խօսքս գաւառական ուսուցչի մասին է), ուսուցչից, որը իր երջանկութեան գաղափրական տեսակէտով հասած է համարում իրան, երբ թարմ ոյժերը—կրիտաւարներն—միացնում, ընկերովի գործել է սովորեցնում, այդ ուսուցչից իր նմանի հետ չէ ընկերակցում մի ամենաօգտակար գործ հիմնարկելու... դարմանալի, բայց և իրողութիւն է:

Նայեցէ՛ք թիֆլիսի բաղմամբիւ հայ ուսուցչիչներն ու վարժուհիներին, տեսէ՛ք թէ որքան անշատ են ապրում իրարից. մինչև անգամ շատերը իրար չեն ճանաչում, իսկ եթէ ճանաչում և ծանօթ են, նրանք պատահում են իրար Մուշտայի դուռը մտնելու: Բացառութեան մասին չէ խօսքս: Իսկապէս ինչը կարող է կարճ ժամանակամիջոցում խօսակցութեան նիւթ դառնալ:

Այլըստիպացուած չինք դպրոց կայ, որոնց ուսուցչական խմբերը նոյնպէս անշատ են ապրում իրարից. Երևանի ուսուցչիչներն էլ նոյն վիճակն ունեն մասամբ:

Եթէ մի քաղաքի մէջ ապրող ուսուցչական խմբերը այսպիսի յարաբերութեան մէջ են, պարզ է որ զանազան քաղաքներում և գիւղերում ցրված ուսուցչիչներն ու վարժուհիները աւելի անշատ պիտի ապրեն իրարից, և այդպէս էլ է:

Մենք ուսուցչիչներն չունենք մեր ֆոկլորում, ուր դարձած լինէր բոլորիս ուշադրութիւնը, մեզ կապող միացնող օղակը չը կայ. այդ պիտի լինէր ուսուցչական փոխառու—խնայողական արկղի:

Մենք այժմ կաղմում ենք որոշ դասակարգ, բայց չունենք դասակարգելի յատուկ միութեան ձգտում: Արհեստաւորներն ունեն խնայողական արկղ, գործակատարները ձգտում են հիմնել կուլաներ, խնայողական գանձարան և այլն, իսկ մենք՝ ոչ:

Մեզ հետ գործադրութիւն քիչ է պատահում. քանի քանի դէպքեր կարող եմ յիշել, որ ուսուցչից իրանից անկախ պատճառով ստիպված է եղել թողնել ուսուցչութիւնը. դուրս գալուց յետոյ նա մինչև նոր գործ գտնելը համարեա քաղցած է մնացել: Քիչ է պատահում, որ ուսուցչից, ծանրաբեռնված ընտանիքով, հիւանդանում է, ու է պահում նրան: Այո, մուրալով օրն անց է կացնում: Ով չէ յիշում հողեկան հիւանդ ուսուցչից, որ ահա քանի տարի է թափառում է թիֆլիսի փողոցներում. ով էր պահում նրան... մի

բաղնիսպան: Նոյնանման հիւանդութիւն ստացաւ և ուսուցչի Ա. Մատինեան. ով օգնեց նրան, կարծես Ախալցխայից և քիչ էլ թիֆլիսից օգնութիւն ստացաւ. ինչու չը լինէր մեր խնայողական արկղը, որից մենք բաժին հանէինք՝ մեր թշուառ ընկերակցին: Մեզանից ով կարող է երախտաւորել իր մասին, թէ իրան անակնկալ գործադրութիւններ չեն պատահի:

Ուսուցչական-խնայողական արկղի բացակայութիւնը մեր ամենամեծ պակասութիւնն է...

Բոլորս էլ համամիտ ենք արկղի գոյութեան, որ ուսուցչին հարցնէր, կասի. «Այո, բա՛ւ է, ես էլ կարող եմ մասնակցել, բայց...»

Ասացէ՛ք խնդրեմ, «բայց» ի՞նչ փաստ է, որով արդարացնում ենք մեզ: Ակամայ յիշելու եմ այս տեղ «բայցով» պատճառաբանվող մի դէպք էլ գաւառական վարժուհուն խնդրում են մասնակցել թատրոնական ներկայացումներին. նա համաձայնվում է. գիտե՛ք, ես շատ եմ սիրում թատրոնը, յարգում եմ նրա գաղափարը, կուզէի մասնակցել, «բայց...»: Գիւժ. վարժուհու «բայցը» մասամբ հիմք ունի. մեր լինչ հիմք ունի, բայց մեր ականջի կողմը ցցելը:

Տաս տարի առաջ մենք պիտի հիմնած լինէինք փոխառու-խնայողական արկղ և ոչ թէ այժմ դեռ խօսէինք նրա հնարաւորութեան մասին, սակայն չլաւ է ուշ, քան երբեք:

Ուսուցչի

ՆՈՒՐԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Երէկ, 28-ին հոկտեմբերի, Նոյն Կայսրական Մեծութիւնների ամուսնութեան 25-ամեակի լրանալու օրը, թիֆլիսի Սիօնի մայր-եկեղեցում հանդիսաւոր պատարագ և գոհացողական մատչանքներ կատարվեցան: Առաւօտից արդէն քաղաքի բոլոր փողոցները զարդարված էին դրօշակներով, իսկ երեկոյան քաղաքը լուսաւորված էր:

«Кавказ» լրագրի № 284-ի մէջ կարդում ենք հետեւեալ կառավարական կարգադրութիւնը. «Բարձրագոյն հրամանով, որը կայացաւ սեպտեմբերի 19-ին, հայ-ուսաւորչական օրնօղի անդամներ, Սուբխան Պարզեանց և Ներսէս Խուզալիւրդեանց եպիսկոպոսները, իրանց ապօրինի գործողութիւնները համար սինդի անդամների պաշտօնում, արձակված են իրանց բոլոր պաշտօններից և հեռացրած են՝ մինչ օրը Օրդուկայա, իսկ երբ որոշեց Պաշտակայա նահանգը: Մի և նոյն ժամանակ հրամայված է. Էջմիածին օրնօղի անդամների թափուր մնացած տեղերը նոր անդամներով

Բայց վերածնութեան սկիզբը այդ դեռ չէ նշանակում վերածնութիւն: Կարող է շարունակութիւնը չը լինել, կարող է վերածնվածը մտնել: Եւ գործադրաւոր նկատվում են մի քանի նշաններ, որոնք կարծես ցոյց են տալիս, որ Մօսկվայի հասարակութիւնը աչքերը խոր քնից բաց արեց, ոչ թէ բոլորովին դարձնելու մտքով, այլ միայն քննաթափախ աչքերը տորբելու, չորս կողմէ անտարբեր հայեացք զցելու ու անորոշակով յորանջելուց յետոյ նորից խօրը քնելու համար: Այդ նշանները դեռ այնքան զօրեղ չեն, կարելի էր նրանց վրա ուշադրութիւն չը դարձնել, բայց այնքան տխուր է այն ապագան, որ խոստանաւ են մեզ այդ նշանները, որ մարդ անկամայ չափ զանցնում է այդ նշանների նշանակութիւնը: Գիտնալ և հաւատանք, որ այդ միայն անցաւոր նշաններ են և, որ Մօսկվայի հայ կոլօնիան կը ցանկանայ և կը կարողանայ բռնել այն դիրքը, որ նրան վայել է:

Իսկ ինչ բարձր դիրք է վայել Մօսկվայի հայ կոլօնիային, ինչ փառաւոր դեր կարող է կատարել նա:

Երբ որ գաղթականները գզում են, որ այնպէս ապրել ինչպէս իրանք էին ապրում չէ կարելի երբ որ նրանք փնտռում են բարոյական կապ մտքորոշութեան հետ և գտնում են այդ կապը, այն ժամանակ նրանք փրկված են, այն ժամանակ նրանք ոչ միայն դուրս են գալիս իրանց ցուրտ և խաւար բարոյական մթնոլորտից, այլ և լոյսի ու ջերմութեան աղբիւր են դառնում իրանց հայրենակիցների համար: Այդ այդպէս է լինում մանաւանդ առանձին բարեյաջող պայմաններում գտնվող կոլօնիաների հետ, ինչպէս օրինակ Մօսկվան է:

(Կը շարունակվի)

ստանան այն մարդու ցանկութիւնները, զգացմունքները, որ չըլայատված է միայն օտարներէ: Իսկ իսկ, հարստահարել, ստոր միջոցներով կապել կապակցել օտարներ, խորամանկութեամբ գրաւել օտարի կնոջ սիրտը, սուտ խոստումներով յափշտակել նրանից այն, ինչ որ ամենից թանկ է նրա համար, յետոյ ծիծաղել նրա վրա, այդ այնքան մեղք չէ, այդ բոլորովին մեղք չէ, այդ մինչև անգամ քաջութիւն է, այդ, այդ... ներքեցէ, ինչէ՛ք յարգողներ... մինչև անգամ աղգասիրութիւն է:

Մարդիկ մի որ և է վարմունք բարոյական տեսակէտից գնահատելու. համար երկու մաս շտաբ են գործ դնում, մէկը՝ խաղաղ ժամանակի, միւսը՝ պատերազմի համար: Ինչ որ յանցանք է խաղաղ ժամանակ, կարող է ներելի, մինչև անգամ գովելի, պարտադիր համարվել, պատերազմի դեմ համար: Կարողացէ՛ք երեկի զօրագետների կենսագրութիւնները և կը տեսնէք, որ նրանց գլուխը դարձաւ պատկի թերթերի նշանաւոր մասը կաղմվում են խորամանկութիւնից, անդալայութիւնից և այլն: Ճիշդ է թէ ոչ այդ հակասութիւնը երկու տեսակէտների մէջ, վերջապէս եթէ ճիշդ է որ ատորձանի, հարցը այդ չէ այժմ: Այդ տարբեր մասշտաբները են յիշեցի նրա համար, որ օտարներով չըլայատված անհատը (եթէ նա մտաւորապէս ու բարոյապէս շատ զարգացած չէ) մի տեսակ պատերազմական դրութեան մէջ է գտնվում միշտ, գոնէ ինքն է այդպէս նայում իր դրութեան վրա և այդ տեսակէտուն է առաջնորդվում իր վարմունքներում:

Երկարատես պատերազմը ազդում է պատերազմով ընաւորութեան վրա, նրան որոշ բարոյական կերպարանք է տալիս: Գաղթականը վարժվելով խաբել օտարներին, յետոյ պատահելով իր ցեղակիցներին նրանց էլ է սկսում խաբել—

ВЫЧКА ВТОРАЯ НАТУРА.

Այսպիսով գաղթականի դրութիւնը խնդրելով նրա ընտանիքի հետ բոլոր լաւ կողմերը և անպարէզ բաց անկողի նրա վատ հակումների համար, դարձնում է նրան վերջի վերջոյ չօշ հայի խոնկ, ոչ թուրքի ուղարկիչ, անօգուտ մարդ թէ հայի թէ թուրքի համար, դարձնում է նրան հացկատակ, պ ա ր ա զ ի տ, պարագիտի բոլոր անհամակերի յատկութիւններով:

Գարձնում է, այսինքն դարձնում է պարագիտ եթէ, ի հարկէ, խանդարող պայմաններ չը լինեն. իսկ միակ պայմանը, որ կարող է գաղթականին, առհասարակ պահուելու, աղտոտել բարոյական անկումից՝ այդ գաղթական է իր կենդանաւոր ոյժով: Այն գաղթականը, որ չէ ուզում զրկվել «Աստուծո զապիկերից», որ չէ ուզում դառնալ жедуточно-половой космополитъ, պէտք է փնտռի մի որ և է բարոյական կապ, որ կապի նրան ուրիշների հետ պարտադիր յարաբերութիւններով, փոխադարձ պարտականութիւններով, և գտնելով այդ կապը գաղթականը պէտք է պինդ պահի նրան, որովհետեւ նրանից դուրս չը կայ փրկութիւն:

Մօսկվայի կոլօնիայի մի մասը—ուսանողները (որոնք մասին մի ուրիշ անգամ) ապահովված են (ի հարկէ, ոչ բոլորը) այդ բարոյական վտանգից, սրանք հանգամանքների բերմամբ չեն ապրում, այլ իրանց վարմունքներում առաջնորդվում են որոշեալ գաղափարներով—գոնէ այդպէս պէտք է ենթադրել:

Մօսկվայի հայ կոլօնիայի միւս մասը, բուն կոլօնիան բառի իսկական նշանակութեամբ երկու մասի է բաժանվում: Փոքրամասնութիւնը—խնդիրը զենտ պարագիտները ունեցողները հէնց այն պատճառով, որ նրանց պարագիտները խնդիրներն ապարպմունք է, շատ հեռու չեն կարող մնալ գա-

ղափարներից. բացի դրանից նրանք առհասարակ կապված են լինում խնդիրներ չըլանի հետ: Մեծամասնութիւնը—ոչ խնդիրներ գործով զգաղդողները ընկալաւոր յարաբերութիւն են ունենում Մօսկվայի ընակիչների մտաւորապէս ստոր խաւերի հետ և նոյնպէս ընկալաւոր հեռու են գաղափարների աշխարհից:

Այս այսպէս կը լինի, եթէ թողնեն հանգամանքները բերմունքն և այդպէս եղել է մինչև վերջին տարիներս, որովհետեւ աշխատողներ չեն եղել կուլուր անբարեյաջող հանգամանքների հետ: Հայ կոլօնիայի մեծամասնութիւնը մինչև այժմ քնած է եղել խոր քնով, վարելով միայն կենդանաւորական կենսի, իսկ փոքրամասնութիւնը կամ բոլորովին կտրված այդ մեծամասնութիւնից կամ կապված միայն տղամարդկանց թղթախաղով ու կանանց բամբասանքով (բամբասանքներն էլ են կապում մարդկանց) չէ ուղեցել դարձնել այդ մեծամասնութիւնը, թէ և իսկապէս ասած՝ չէր էլ կարող դարձնել, որովհետեւ ինքն էլ հիւանդ է եղել բարոյական-մտաւոր արևմտապաշտութեամբ:

Այդ մինչև վերջին ժամանակներս, բայց ահա մէկ—երկու տարի է, որ Մօսկվայի հայ կոլօնիան ինքնուրույն ձևով մի նոր երևոյթ է ինքնան էլ կտրված լինի կոլօնիան իր մայր-հայրենիքից, այնու ամենայնով մի որ և է կապ, թող կապ մնում է, մնում է գոնէ մի երակ, մի բարակ մաշկանան երակ, որ կապում է կոլօնիան մայր-հայրենիքի սրտի հետ և երբ որ այդ սրտը սկսում է աւելի արագ լսել, այդ հաղորդվում է նոյնպէս և կոլօնիային: Այդպիսով պէտք է բացատրել այն բարոյական վերածնութիւնը, կամ աւելի ճիշդ կը լինի ասել վերածնութեան սկիզբը, որ նկատվում է այժմ, գոնէ նկատվում էր մօտիկ անցեալում, մօսկվայի հայերի մէջ:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Վաղը, չորեքշաբթի, հոկտեմբերի 30-ին, առաջ-քահանայ ՅՈՎԱՆՔ ՕՐԲԵԼԻԻ մահվան 40-րդ օրը, վաղը մայր-եկեղեցում, ժամը 11-ին առաւօտեան կը կատարվի պատարագ և հոգեհանգիստ, որի մասին հանգուցեալի զաւակները յայտնում են ազգականներին և ծանօթներին, խնդրելով իրանց ներկայութեամբ յարգել հանգուցեալի յիշատակը:

1—1

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Տեղափոխվել է Գործիչների Պրոսպեկտ տ. Միգոնի, № 5, Թիֆլիսի Ժողովարանի հանդէպ:

1—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՈՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 1/13 նոյեմբերի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ CAMABODGE (ԿԱՄԲՕՋ) շոգենաւը, նաւապետ REMES (ՐԵՄԵՍ) դէպի Կ. Պօլիս, Մարսէյ, Հաւր, Լոնդոն, մասնաւոր և միջանկեալ նաւահանգիստները:

Ազգեստները, ԲԱԹՈՒՄԻՄ՝ ՄԱԼԱՎԱՋԻ, ԹԻՖԼԻՍԻՄ՝ ԳԵՈՐԳ ԷԵՋՈՒԹԵԱՆ ՀԵՋՈՒԹԵԱՆ ԶԵՋՈՒԹԵԱՆ ԲԵՋՈՒՆՑ, Իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ՝ ԳՈՒԼԻՈՒՍ:

1—2

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

ՊԱՍԻԱԼԻԻԻ Եղբայրներ Ֆիրմայի

(Բրուսայում (Թիւրքիա))

Պասալիգի եղբ. զէյնէդին սերմ,

Ինչպէս յայտնի է արդէն կովկասեան շերամապահներից շատերին, յայտնվում է ամենաառողջ և տալիս է մինչև 35 ֆունտ հում սպիտակ ԲՕԺՕԺ սերմի 1 զոյտանիկից: Ծախվում է քառակուսի արկղերում, 8 զոյտանիկ իւրաքանչիւրում, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Գինը զոյտանիկի 75 կոպէկ:

Սերմ առնել ցանկացողները մեծ քանակութեամբ կարող են դիմել Թիֆլիս, ԳՎՕՐ՝ 80ՎԱՅԱ փողոց, վրաց Ազնուականների բանկի քարվանսարայ, № 119, Պասալիգի եղբայրներին:

2—5

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՋԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԱԽԱԳԸ յայտնում է ի գիտութիւն Թիֆլիսի վաճառականների, որ իր գրասենեակում, որը գտնվում է Գօրցօվայա փողոցում, Թիֆլիսի Ազնական Կարուծական բանկի քարվանսարայի վերին յարկում, պ. Նահանգապետի թղթաւթեամբ, բացվում է հանգանակութիւն յոգուտ Ռուսաստանի ներքին նահանգների ազգաբնակչութեան, որը վնասվել է անաջող հունձից: Նուիրատուներին կը տրվեն պատշաճաւոր անդորրագրեր:

2—2

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ՝ 6-ին նոյեմբեր ամսոյ 1891 ամի, երեկոյեան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տալու նոյն դպրոցի կալուածքը № 46 (ընծայած հանգուցեալ Թարուլիւն Օքոյեանից), որ գտնվում է Կուր գետի հեղեղատի «Սաղի» վրա: Պայմանաթուով կարելի է կարգաւ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը:

2—3

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտարարում է, որ նոյեմբերի 12-ին, ժամը 11-ին առաւօտեան, վարչութեան ատենաւում, պիտի աճուրդով վարձու տրվեն զանազան տեղերը Կուր գետի սառույց կտրելու համար. կոնդիցիան կարելի է տեսնել ամեն օր ժամը 10-ից մինչև ժամը 2 առաւօտեան:

2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած և ֆոնտայն:

Բաթումից Մարսէյ, մասնաւոր Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս:

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 6/18 նոյեմբերի	—	ԱՐՄԵՆԻԱ	—	ՏԻԲԱԼ
— 20 նոյեմբ. (2 հոկտեմբերի)	—	ՍԻՐԿԱՍԻ	—	ԲՕՇԵԼ
— 4/16 դեկտեմբերի	—	ԱՆՍՈԼԻԱ	—	ԳԱՐԻԳ
— 18/30 դեկտեմբերի	—	ՄԻՆԳՐԵԼԻԱ	—	ԺԻՐՈՒՆ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ: Տօմասների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցած են:

Տեղեկութիւնների համար ծանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճն դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գարանիօնին, Նաբեբէժնայա, ԹԻՖԼԻՍԻՄ պ. Վիկտոր ԳԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին զենեակ Տէր-Ասատուրովի տանը, ԲԱԳՈՒՄՍ, Սամսոն Գիւղարովին, Կօլիբրակիսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՈՍԻՑ՝ ՍԿՈՒՄ պ. Լուի Բընօն:

2—6 (Կ. Զ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԻԱՆԻ

(Կուրիս, վարձարար արձանի հանդէպ)

Հիւանդների ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՍՈՏԵՐԸ

ՆԱԽԱՍԱՐԻԱՆ—10—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնաբուժի) սիֆիլիսի և աչքաբուժի ԲՈՒԿՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց. ԿԻՆԻՔԻ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց. ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—12—1 ժ. ակնաբ. կոկորդի և քթի ց. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՐՍՄԱԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան. ԳՈՒԼԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղախի ց. (էլեկտրոտերապիա): ՆԱԽԱՍԱՐԻԱՆ—6—7 ժ.

Վճար—50 Կ. Համալսարանի (Կոնսիլիումի) համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուէ ընդհանուր Նաւասարդեան

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առեւտրական հաշարարուծութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսուցմանը համար:

Ս. ՄԱՆՈՒԵԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղւակներով, 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%—ից մինչև 12% վաճառվում է եղբայր Ծովանովների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Թիֆլիս, Нагорная ул., № 9. Օտարաբաղադրելու դիմում են վերջին հասցէով՝ С. П. Махуэляну.

Գինն է 1 ռուբլի: Փօստի ծախս 21 Կ. Գրավաճառներին դիմում կը լինի:

28—150

ԱԽԱՆԴՎՈՒՄ ԵՆ

Ֆրանսիական, անգլիական և գերմանական լեզուները

ԲԵՐԼԻՑԻ

Ամերիկական նոր մեթոդով

Որի օգնութեամբ աշակերտները ամենակարճ ժամանակում ազատ կերպով խօսել են սովորում:

Գանձակայա փողոց, տուն Շահնազարովի, № 15. Երրորդ յարկում:

3—5

Հոկտեմբերի 20-ից

ՊԱՏԱՀԱԿԱՆ

1891 թվ.

ԷԺԱՆ ՎԱՋԱՌՈՒՄՆ

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱԳԱՋԻՆ

ՄԱՐԴԱՆՑ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏ

ՁԳԵՍՏՆԵՐԻ

Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԵԱՆՑ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

ԹԻՖԼԻՍԻՄ

Գործիչների պրոսպեկտում, I գիմնալիայի դիմաց, տուն Միլիանի

ԱՇՆԱՆ ՍԷՋՈՆԻ ԲԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Միայն 30 օրվա ընթացքում

կը լինի

ՎԱՋԱՌՈՒՄՆ բոլոր եղած ապրանքների այլ և այլ գործարանների 30% պակաս քան ֆաբրիկաների գները:

Բացի Ս. ԿԱՄԼԵՏԻ ֆաբրիկայից:

Մագալինը ուղարկութիւն է դարձնում մանաւանդ մարդկանց համար ստացված մուշտակների, պալտոնների և զգեստների ՄԵՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ վրա: Այդ ապրանքները իրանց նոր ձևերի, իրանց նիւթի յատկութեան և արտաքին տեսքի կողմից դիմանալու են ամեն տեսակ ՄՐՏՄԱՆ:

Բոլոր այդ ապրանքները մենք առել և մեր հսկողութեան տակ պատրաստել ենք տուել ՄՕՍԿԱՅՈՒՄ:

3—9

ВЫСОЧАЙШЕ

ТОВАРИ-

МЕХАНИЧЕСКАГО И ЧУ-



УТВЕРЖДЕННОЕ

ЩЕСТВО

ГУННО-ЛИТЕЙНОГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовыхъ, вальцовыхъ поставовъ крупосѣкъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лесопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ граблей «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполнение всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелезныхъ дорогъ.

Складъ локомотивовъ, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми ба- рабанами и конныхъ приводовъ известной фирмы Клейтонъ и Шутлѳортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ нД. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реального училища кв. № 8.

85—100 (Կ. Զ.)